



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 08/1

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2017 թվականի օգոստոսի 1-ից

ԳՅՈՒՏԵՐ	4, 85
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>6, 87</i>
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	9, 89
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>11, 91</i>
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	12
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին</i>	<i>14</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	<i>53</i>
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՅՏԵՐ	55
<i>Տեղեկություններ ապրանքային և սպասարկման նշանների հայտերի մասին</i>	<i>57</i>
ՑՈՒՑԻՉՆԵՐ	79
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	81
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	92

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Երևան 0010, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 3
Հեռ. (011) 597-537 հայտերի ընդունման բաժին
Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-
տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

Ереван, 0010, Площадь Республики,
Правительственный дом, 3
Тел. (374 11) 597-537 отдел приема заявок
Тел. (374 11) 597-535 отдел информационно-
технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 85
Сведения о выданных патентах.....	6, 87
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	9, 89
Сведения о выданных патентах.....	11, 91
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	12
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	14
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	53
ЗАЯВКИ НА ТОВАРНЫЕ ЗНАКИ	55
Сведения о заявках товарных знаков и знаках обслуживания.....	57
УКАЗАТЕЛИ.....	79
СООБЩЕНИЯ.....	81
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	92

CONTENTS

INVENTIONS.....	4, 85
Information on granted patents.....	6, 87
UTILITY MODELS.....	9, 89
Information on granted patents.....	11, 91
TRADE MARKS.....	12
Information on registered trade marks and service marks	14
Information on renewal of effect of trademark registration	53
TRADEMARK APPLICATIONS	55
Information on trademarks and service marks applications	57
INDEXES.....	79
REPORTS.....	81
TWO-LETTER CODES.....	92

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը A գյուտի արտոնագիր B արտոնագրաունակության մասին եզրակացություն
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **2017.01** (11) **3124** (13) **A**
A61F 9/00

(21) **AM20160003** (22) **21.01.2016**

(72) Ասատուր Նիկոլայի Հովսեփյան (AM)

(73) Ասատուր Նիկոլայի Հովսեփյան, 0078, Երևան, Մարգարյան 2-րդ նրբ. 13, բն. 39 (AM)

(54) **Գոտևորող կար և դրա կիրառման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է առողջապահության բնագավառին, հատկապես՝ ակնավիրաբուժությանը, եղջրենու օպտիկական զոնայում ախտաբանական փոփոխությունների վիրահատական բուժման ժամանակ օգտագործվող կարերին:

Գյուտի էությունն այն է, որ ներհյուսվածքային և արտահյուսվածքային հատվածներ ունեցող խաչաձև կար է դրվում այնպես, որ ասեղի յուրաքանչյուր անցումը դառնա եղջրենու կենտրոնական առանցքին համակենտրոն 7-11 մմ տրամագծով շրջանագծին ներգծված հավասարակող բազմանկյան կողմ այնպես, որ ամեն հաջորդ անցումից թելն անցնի եղջրենու օպտիկական գոտու մակերևույթի վրայով՝ ի վերջո ստեղծելով կենտրոնական համաչափություն ունեցող վարդակապի նման գոտևորում, ընդ որում, անհրաժեշտ և(կամ) բավարար լինելու համար դնում են երկու փոխողղահայաց կամ երեք միմյանց նկատմամբ 60° անկյան տակ, երկթև կարեր կամ մեկ համաչափ եռաթև կար:

Բարձրացվում է եղջրենու օպտիկական զոնայում դրվող կարերի կայունությունը՝ բացառելով այդ զոնայի վնասումը վիրաբուժական ասեղով, 10 նկ.:

(51) **2017.01** (11) **3125** (13) **A**
A61K38/00

(21) **AM20170062** (22) **11.04.2017**

(72) Ժան Հակոբյան (AM), Մարինա Գազարյանց (AM), Զոյա Մկրտչյան (AM), Լյուդմիլա Ներսեսովա (AM), Մարիամ Պետրոսյան (AM), Լինա Պողոսյան (AM)

(73) «ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0052, Երևան, Հասրաթյան 7 (AM)

(54) **Ինտերֆերոնի ինդուկտորի օգտագործումը որպես իոնիզացնող ճառագայթումից ռադիոպաշտպանիչ միջոց**

(57) Գյուտը վերաբերում է ճառագայթային բժշկությանը, մասնավորապես՝ երկպարույր ՌՆԹ-ի կալցիումական ածանցյալի ինտերֆերոնագեն հակավիրուսային պատրաստուկի օգտագործմանը որպես իոնիզացնող ճառագայթումից ռադիոպաշտպանիչ միջոց:

Ինտերֆերոնի ինդուկտորն անջատում են *Saccharomyces cerevisiae* խմորասնկերի քիլերային շտամից: Այն պարունակում է երկպարույր ՌՆԹ, որը ձևափոխվում է Ca^{2+} իոնների ներմուծման շնորհիվ ($Ca-ds\text{-}\text{RN}\text{-}\text{A}$): Դա թույլ է տալիս մի կողմից զգալի բարձրացնել բջջային թաղանթներով թափանցելիությունը, մյուս կողմից, ճնշելով շիճուկային նուկլեազների ակտիվությունը, զերծ մնալ նրանց հիդրոլիզող ազդեցությունից:

Գյուտը թույլ է տալիս ընդլայնել իոնիզացնող ճառագայթումից ռադիոպաշտպանիչ միջոցների տեսականին:

(51) **2017.01** (11) **3126** (13) **A**
B01G20/00

(21) **AM20160005** (22) **29.01.2016**

(72) Նինա Բորիսի Թավաքալյան (AM), Սոֆյա Նիկոլայի Սերգեյեվա (AM), Պատվական Ստեփանի Ոսկանյան (AM), Կոնստանտին Իվանի Փյունկյուլյան (AM), Աննա Հովհաննեսի Թադևոսյան (AM), Ստեփան Խաչատուրի Մայրապետյան (AM), Մացումոտո Հայդետոշի (JP), Տցուրուկա Շուջի (JP)

(73) Նինա Բորիսի Թավաքալյան, 0096, Երևան, Մոլդովական 6/1, բն. 29 (AM), Աննա Հովհաննեսի Թադևոսյան, 0005, Երևան, Արցախի 8ա, բն. 39 (AM)

(54) Ցեզիումի ճառագայթաակտիվ նուկլիդների պոլիմերաանօրգանական սորբենտ և դրա ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է ճառագայթաակտիվ նուկլիդների կոմպոզիցիոն օրգանաան-օրգանական սորբենտներին և դրանց ստացման եղանակներին, որոնք կարող են արդյունավետ կերպով կիրառվել ցեզիումի ճառագայթաակտիվ նուկլիդներից տեխնոլոգիական լուծույթների մաքրման, ինչպես նաև ճառագայթաակտիվ նուկլիդների հողից դեպի բույսեր տեղափոխման կարգավորման համար: Սորբենտը ներառում է պոլիմերային մատրիցա (ակրիլային թթվի համապոլիմեր), հանքային լցանյութ (բենտոնիտ կամ ցելոլիթ) և անցումային մետաղի ֆեռոցիանիդ, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ, զանգված. %: պոլիմերային մատրիցա՝ 60.0-90.0, հանքային լցանյութ՝ 9.9-37.0, անցումային մետաղի ֆեռոցիանիդ՝ 0.1-3.0:

Ցեզիումի ճառագայթաակտիվ նուկլիդների պոլիմերաանօրգանական սորբենտը ստանում են հետևյալ կերպ. խառնում են պոլիմեր, հանքային լցանյութ և մետաղի ֆեռոցիանիդ, ապա ստացված պոլիմերային խառնուրդը վերածում են սորբենտի: Սկզբում ակրիլային թթվի ռադիկալային (համա)պոլիմերացմամբ ջրային միջավայրում հանքային լցանյութի և պոլիմերացման հարուցչի առկայությամբ ստանում են պոլիմեր՝ պոլիակրիլաթթու կամ դրա ածանցյալները, որից հետո պոլիմերի ժելանման ջրային դիսպերսիային խառնման պայմաններում ավելացնում են անցումային մետաղի աղի և ալկալիական մետաղի ֆեռոցիանիդի ջրային լուծույթներ: Ստացված պոլիմերային խառնուրդը վերածում են թաղանթի, հատիկների կամ փոշու: Հանքային լցանյութի և ալկալիական մետաղի ֆեռոցիանիդի զանգվածային հարաբերակցությունը խառնուրդում 1: (0,01-0,075) է:

Պարզեցվում է ցեզիումի ճառագայթաակտիվ նուկլիդների պոլիմերաանօրգանական սորբենտների ստացման եղանակը:

(51) 2017.01 (11) 3127 (13) A
G01V 1/00

(21) AM20170055 (22) 05.04.2017

(72) Աշոտ Գասպարյան (AM), Ջոն Կարապետյան (AM)

(73) ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ ՊՈԱԿ, 3115, Գյումրի, Վ. Սարգսյան 5 (AM)

(54) Սեյսմիկ տվիչ

(57) Գյուտը վերաբերում է երկրաֆիզիկական սարքաշինության, սեյսմաբանության, ինժեներային սեյսմաբանության և սեյսմակայուն շինարարության ոլորտներին:

Սեյսմիկ տվիչն ունի իրան, որի վրա տեղադրված է տատանվող ճոճանակ իներցիոն զանգվածով և իներցիոն զանգվածի հետ միևնույն առանցքի վրա տեղադրված կոճ: Սարքն ունի նաև կոճին համառանցք, իրանի վրա տեղադրված նիոդիմային մագնիս, ընդ որում կոճի միջուկը պատրաստված է պղնձից: Սարքի իներցիոն զանգվածը և կոճը տեղադրված են ճոճանակի տատանման առանցքից 140 մմ հեռավորության վրա:

Մեծացվում է ճոճանակի սեփական տատանումների մարման գործակիցը, պարզեցվում է կառուցվածքը, փոքրանում է ճոճանակի զրոյական դիրքի անկայունությունը, 1 նկ.:

(51) 2017.01 (11) 3128 (13) A
H01H 51/00

(21) AM20170013 (22) 16.02.2017

(72) Ավգեն Գասպարյան (AM), Մարինկա Բաղդասարյան (AM), Աիդա Կիրակոսյան (AM)

(73) «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Ավտոմատ պաշտպանիչ սարք

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկային:

Ավտոմատ պաշտպանիչ սարքն ունի կամրջակային ուղղիչ և երկու կիսահաղորդչային լարման ռելեներ: Յուրաքանչյուր լարման ռելեն կազմված է էլեկտրամագնիսական ռելեից, ռեզիստորից, պոտենցաչափից,

տրանզիտորից, ստաբիլիտրոնից և տիրիստորից: Կամրջակային ուղղիչը միացած է սնման ցանցին, ռեզիստորը միացած է պոտենցաչափին, որի շարժական սեղմակին միացած է ստաբիլիտրոնը: Ստաբիլիտրոնը միացած է տրանզիստորի բազային, տրանզիստորի կոլեկտորը միացած է տիրիստորի կառավարման էլեկտրոդին, իսկ տիրիստորը հաջորդաբար միացած է էլեկտրամագնիսական ռելեի կոճին: Սարքն ունի միջանկյալ հանգույցներ՝ սնող ցանցին միացած մուտքային սեղմակներ և սպառիչներին միացած ելքային սեղմակներ: Երկու

էլեկտրամագնիսական ռելեների հպակները միացած են ելքային ռելեին և լուսային ազդարարման շղթաներին, իսկ կամրջակային ուղղիչի ելքը միացած է լարման ռելեների, ելքային ռելեի և լուսային ազդարարման բլոկի մուտքերին: Սարքը լրացուցիչ ունի հաշվիչ բլոկ, որը բաղկացած է երկու էլեկտրաիմպուլսային հաշվիչից, որոնց փաթույթները միացած են էլեկտրամագնիսական ռելեների փոխանջատվող հպակներին: Կամրջակային ուղղիչի ելքը միացած է հաշվիչ բլոկի մուտքին:

Բարձրացվում է սարքի աշխատանքի արդյունավետությունը 1 նկ.:

*ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ*

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը Ս օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչ(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 2017.01 (11) 493 (13) Ս

F24J 2/00

H02S 10/00

(21) AM20170063U (22) 11.04.2017

(72) Աշոտ Խաչատրյան (AM)

(73) Աշոտ Խաչատրյան, 0096, Երևան, Դ. Մալյան 4, բն. 12 (AM)

(54) **Արևի շարժմանը հետևող համակարգ**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է էներգետիկայի բնագավառին, մասնավորապես՝ այլընտրանքային էներգետիկայի ոլորտին:

Արևի շարժմանը հետևող համակարգն ունի արևային էներգիան ընդունող մակերևույթ, արևային էներգիան ընդունող մակերևույթի ազիմուտալ դարձի և զենիթային դարձի շարժաբեռներ, արևային էներգիան ընդունող մակերևույթի վրա տեղակայված արևի շարժմանը հետևող լուսատվիչներ: Արևային

էներգիան ընդունող մակերևույթը տեղակայված է կիսաշրջանակի մեջ՝ զենիթային դարձի շարժաբեռի միջոցով ուղղաձիգ հարթության մեջ դարձի հնարավորությամբ, իսկ կիսաշրջանակը միակցված է ազիմուտալ դարձի շարժաբեռին՝ հորիզոնական հարթության մեջ 180 աստիճան դարձի հնարավորությամբ:

Ազիմուտալ դարձի և զենիթային դարձի շարժաբեռներից յուրաքանչյուրն իրականացված է երկաստիճան որդնյակային ռեդուկտորին միացված հաստատուն հոսանքով աշխատող շարժիչի տեսքով, ընդ որում, շարժաբեռների աշխատանքը կառավարվում է լուսատվիչների միջոցով՝ անալոգային եղանակով:

Բարձրացվում է ազիմուտով և զենիթով Արևի շարժումներին հետևող համակարգի արդյունավետությունը, 3 նկ.:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշաններին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20161001 (111) 26153
(220) 03.08.2016 (151) 21.07.2017
(181) 03.08.2026
(730) «Մարան» ՍՊԸ, Երևան, Վաղարշյան
18/18, AM
(442) 01.09.2016
(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև և
կարմիր գունային համակցությամբ:
(511)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ:

(210) 20161085 (111) 26154
(220) 24.08.2016 (151) 21.07.2017
(181) 24.08.2026
(730) «Պոլիտան» ՍՊԸ, Երևան, Արշակունյաց
2, 205 սենյակ, AM
(442) 16.09.2016
(540)



(511)
դաս 29. պահածոյացված, սառեցված,
չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր
և բանջարեղեն, մասնավորապես՝ ձիթապտուղ:
(740) Ալբինա Նազարյան

(210) 20161182 (111) 26155
(220) 13.09.2016 (151) 21.07.2017
(181) 13.09.2026
(730) Բերի Նիթվեր Լիմիթիդ, UK
(442) 16.02.2017
(540)



(511)
դաս 18. կաշի և կաշվի նմանակումներ.
թավշակաշի և կաշվե կիսաֆաբրիկատներ.
կանացի պայուսակներ. գրպանի դրամա-
պանակներ, անձրևանոցներ, արևային
հովանոցներ, պիտույքատուփեր հարդարանքի
իրերի համար (դատարկ), ձեռքի պայուսակներ
(պորտֆելներ) փաստաթղթերի համար
(կաշեգալանտերեա), ուղեքեռ (ճամպուրկներ),
դրամանպանակներ, քսակներ (որոնք
պատրաստված չեն թանկարժեք մետաղներից
կամ պատված չեն դրանցով), կաշվե գոտիներ.
պայուսակներ. սպորրաններ (կաշվե պայուսակ
մորթիով). կրեդիտ քարտերի պատյաններ
(դրամապանակներ). քարտերի պատյաններ
(դրամապանակներ). դիմահարդարման պարա-
գաների պայուսակներ և տուփեր. կտորի
տոպրակներ և նոթբուքների ու պլանշետների
պայուսակներ. բանալիների պատյաններ. ձեռքի
ճամպուրկներ. վերը թվարկված ապրանքների
մասեր և լրակազմեր.

դաս 25. հագուստ, հագուստ
պատրաստված քաշմիրից. քաշմիրից գործված
իրեր. տրիկոտաժե հագուստ. կոշիկեղեն,
գլխարկներ, շապիկներ (բլուզներ), գոտիներ,
մորթիներ (հագուստ), ձեռնոցներ (հագուստ),
քաշմիրից պատրաստված ձեռնոցներ,
վզպատներ, քաշմիրից պատրաստված
վզկապներ, փողկապներ, տրիկոտաժեղեն,
կարճագուլպաներ, տնային կոշիկներ,
լողափի կոշիկ, դահուկների կիսակոշիկներ,
երկարաճիտ կոշիկներ, ներքնազգեստ:
(740) Սուսաննա Կնյազյան

(210) 20161202
(220) 15.09.2016

(111) 26156
(151) 21.07.2017
(181) 15.09.2026

(730) Անհատ ձեռնարկատեր Դավիթ Մաթևոսյան
Արսենի, Երևան, Մարկվարտի 92, AM

(442) 03.10.2016
(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև, սպիտակ, կանաչ և նարնջագույն գունային համակցությամբ:

(511)

դաս 29. ընկույզով սուջուխ.
դաս 30. հաց:

(540)



(526) Բացի «VOSKEVAZ» բառից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև և ոսկեգույն գունային համակցությամբ:

(511)

դաս 33. «Սև Արենի» տեսակի խաղողից պատրաստված գինի:

(210) 20161286
(220) 28.09.2016

(111) 26157
(151) 21.07.2017
(181) 28.09.2026

(730) «Քասախ ռեմդետալ» ՍՊԸ, Երևան, Աշտարակի խճուղի 47/5, AM

(442) 17.10.2016
(540)

АНАСТАСИЯ
ANASTASIA

(511)

դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):

(210) 20161384
(220) 21.10.2016

(111) 26159
(151) 21.07.2017
(181) 21.10.2026

(730) Դերմավիտա Քամինի (Լիմիթեդ Փարթներշիփ) Փարսեղյան ընդ Փարթներս, LB

(442) 16.12.2016

(310) 201605042 (320) 22.04.2016 (330) NO
(540)

JUVEDERM

(511)

դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ և այլ նյութեր լվացքի համար. պատրաստուկներ մաքրման, ողորկման (փայլեցման), ճարպազերծման և հղկամշակման համար. ոչ բուժական նպատակներով օգտագործվող օճառներ. օճանելիք, եթերային յուղեր, ոչ բուժական նպատակներով օգտագործվող կոսմետիկական միջոցներ, ոչ բուժական նպատակներով օգտագործվող լոսյոններ մազերի համար. ոչ բուժական նպատակներով օգտագործվող ատամի փոշիներ և մածուկներ. կոսմետիկական միջոցներ սպառողների կողմից օգտագործելու համար. կոսմետիկական կրեմներ, էմուլսիաներ, ոչ բուժական նպատակներով օգտագործվող լոսյոններ, հեղուկներ, լուծույթներ, կաթեր,

(210) 20161309
(220) 05.10.2016

(111) 26158
(151) 21.07.2017
(181) 05.10.2026

(730) «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ, ՀՀ Արագածոտնի մարզ, Ոսկեվազ համայնք, գինու գործարան, AM

(442) 01.12.2016

ժելեր և յուղեր մաշկի համար (դեմքի, մարմնի, ձեռքերի, ոտքերի և վզի), յուղեր կոսմետիկական նպատակների համար. կոսմետիկական հավաքածուներ. կոսմետիկական արտադրանք և պատրաստուկներ մաշկը խնամելու համար. կոսմետիկական դիմակներ. կոսմետիկական պատրաստուկներ նիհարելու համար. մաշկի շերտազատման համար նախատեսված կոսմետիկական միջոցներ. կոսմետիկական պիլինգներ. մաշկի հարթեցման համար նախատեսված կոսմետիկական միջոցներ. մազերի լավորակման և մազերի գլխամաշկի խնամքի համար նախատեսված կոսմետիկական միջոցներ. արևապաշտպան կոսմետիկական պատրաստուկներ և միջոցներ (էմուլսիաներ, լոսյոններ, լուծույթներ, կաթեր, ժելեր, յուղեր, հեղուկներ). կոսմետիկական պատրաստուկներ մաշկի սպիտակեցման համար, մաշկը սպիտակոցնող կրեմներ. գունազրկող միջոցներ կոսմետիկական նպատակների համար. մաշկի գունաբացման համար նախատեսված կոսմետիկական միջոցներ. դեմքի մաշկի բարելավման համար նախատեսված կոսմետիկական միջոցներ. հակակնճիռային կոսմետիկական միջոցներ, դեմքի մաշկի երիտասարդացման համար նախատեսված կոսմետիկական միջոցներ, դեմքի մաշկի սպիտակեցման համար նախատեսված կոսմետիկական միջոցներ. մաշկի խոնավացման համար նախատեսված կոսմետիկական պատրաստուկներ. մաշկի երանգավորման համար նախատեսված կոսմետիկական միջոցներ. եթերային յուղեր և բուրավետ էքստրակտներ. հոտազերծիչներ. մաքրման և բուրավետացման համար նախատեսված պարտաստուկներ:

(740) Զարուհի Մանուկյան

(210) 20161500
(220) 18.11.2016

(111) 26160
(151) 21.07.2017
(181) 18.11.2026

(730) «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ, Արագածոտնի մարզ, Ոսկեվազ համայնք, գինու գործարան, AM
(442) 01.12.2016

(540)



(526) Բացի «CHATEAU VOSKEVAZ» արտահայտությունից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է մուգ կարմիր, ալ կարմիր, ոսկեգույն, բեժ, շագանակագույն, երկնագույն, մուգ կանաչ, մանուշակագույն, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 33. գինի:

(210) 20161567
(220) 01.12.2016

(111) 26161
(151) 21.07.2017
(181) 01.12.2026

(730) «Հայթան» ՍՊԸ, Երևան, Հյուսիսային պող. 2, AM

(442) 30.12.2016

(540)

ՄԵՐՍԻ ԿԱԹ

MERCI MILK

МЕРСИ МОЛОКО

(526) «ԿԱԹ», «MILK», «МОЛОКО» բառերն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(511)

դաս 29. կաթ և կաթնամթերք:

(210) 20161593

(111) 26162

(220) 07.12.2016

(151) 21.07.2017

(181) 07.12.2026

(730) Քուլգեյթ-Փելմուիվ Քամփնի, Դելավերի նահանգ, US

(442) 16.02.2017

(540)

ДРЕВНИЕ СЕКРЕТЫ

(511)

դաս 3. ոչ բուժական նպատակներով օգտագործվող առամի մածուկներ, ոչ բուժական նպատակներով օգտագործվող առամի փոշիներ. պատրաստուկներ բերանի խոռոչի ողողման համար, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. աներոզիներ բերանի խոռոչի թարմացման համար:

(740) Էդուարդ Նահապետյան

(210) 20161619

(111) 26163

(220) 12.12.2016

(151) 21.07.2017

(181) 12.12.2026

(730) Ալլա Վահրամովա, ք.Վանաձոր, Տարոն 4, Մեք. 51ք., քն. 7, AM

(442) 01.02.2017

(540)



(526) «HOUSE OF FOOD» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է դարչնագույն, շագանակագույն, սև, սպիտակ, կապույտ և վարդագույն գույնային համակցությամբ:

(511)

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ.

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ:

(210) 20161622

(111) 26164

(220) 12.12.2016

(151) 21.07.2017

(181) 12.12.2026

(730) Ուեսթերն Դիջիթլ Թեքնոլոջիզ, Ինք., US

(442) 16.02.2017

(310) 70796 (320) 29.08.2016 (330) JM (540)

PRECISIVE

(511)

դաս 9. տվյալների պահման սարքեր, այն է՝ կարծրասկավառակավարներ, թվային սկավառակավարներ, մեդիանվագարկիչներ, դատարկ թվային տեղեկակիրներ, դյուրատար կարծրասկավառակավարներ, կիսահաղորդչային սկավառակավարներ, ֆլեշ հիշողության քարտեր, համակցված սկավառակավարներ և համակարգչային ծայրամասային սարքեր. համակարգչային հիշող սարքեր, այն է՝ հիշողության համակարգչային սարքեր, համակարգչային կարծրասկավառակներ և կիսահաղորդչային սկավառակներ համակարգիչների համար (SSD). հանովի կարծրասկավառակների հիման վրա պահեստային պատճենման համակարգեր. համակարգչային ցանցի հիշող սարքեր, այն է՝ կարծրասկավառակավարներ, թվային սկավառակավարներ, մեդիանվագարկիչներ, դատարկ թվային տեղեկակիրներ, դյուրատար սկավառակավարներ, կիսահաղորդչային սկավառակավարներ, ֆլեշ հիշողության քարտեր, համակցված սկավառակավարներ և համակարգչային ծայրամասային սարքեր տեղում կամ հեռահաղորդակցական կապի ցանցերի միջոցով կամ ամպային միջավայրում էլեկտրոնային տվյալների պահման կամ պահեստային պատճենման

համար. համակարգչային արտադրանք, որը նախատեսված է տվյալների պահման սարքերից, կարծրասկավառակներից, սկավառակավարներից, ինչպես նաև տեսամոնիտորների, պրոյեկտորների, համակարգիչների և շարժական սարքերի՝ պլանշետների, սմարթֆոնների, լեփթոփների համակարգչային ծայրամասային սարքերից տեքստերի, տվյալների, ձայնա- և տեսաֆայլերի, թվային պատկերների և մուլտիմեդիային բովանդակության հաղորդման, հոսքային փոխանցման, դիտման և վերարտադրման համար. ինտեգրալ սխեմաների չիպեր. ախտորոշման սարքեր ոչ բուժական նպատակների համար, այն է՝ սարքեր համակարգչային համակարգերի վերլուծության և օպտիմալացման համար. վերլուծական սարքեր ոչ բուժական նպատակների համար, այն է՝ ինտեգրված ապարատային ապահովում, ներկառուցված ծրագրային ապահովում և ծրագրային համակարգ տվյալների մշակման լայնամասշտաբ կենտրոնների կառավարման և տվյալների վերլուծության, տվյալների պահման և տվյալների պահման համակարգերի աշխատանքն ապահովելու համար. դատարկ սմարթ-քարտեր (միկրոսխեմաներով քարտեր). ինտերֆեյսներ համակարգիչների համար. կապիդիտային սարքեր, մեդիանվագարկիչներ և համակարգչային սարքեր, այն է՝ մագնիսական ժապավենի բլոկներ համակարգիչների համար, համակարգչային հիշող սարքեր, համակարգչային օպերացիոն համակարգեր և տվյալների ներմուծման համակարգչային սարքեր. համակարգչային ծրագրային ապահովում, ապարատներ և ներկառուցված ծրագրեր էլեկտրոնային տվյալների պահման, համաժամացման, վերբեռնման, աղբերման, ներբեռնման, կառավարման, կազմակերպման, պաշտպանության, համատեղ օգտագործման և պահեստային պատճենման համար. համակարգչային ծրագրային ապահովում համակարգչային համակարգերի վերլուծության և օպտիմալացման համար. համակարգչային օպերացիոն համակարգեր. ներկառուցված համակարգչային ծրագրեր համակարգչային համակարգերի և բաղադրամասերի օպտիմալ աշխատանքի վերահսկման համար. ներբեռնվող ծրագրային ապահովում համակարգչային

համակարգերի վերլուծության և օպտիմալացման համար. համակարգչային համակարգերի վերլուծության և օպտիմալացման նպատակով կիրառվող ներբեռնվող ծրագրային ապահովում շարժական սարքերի համար. ներբեռնվող էլեկտրոնային ուսումնական ձեռնարկներ տվյալների պահման սարքերի ոլորտում, այն է՝ կարծրասկավառակավարներ, թվային սկավառակավարներ, մեդիանվագարկիչներ, դատարկ թվային տեղեկակիրներ, դյուրատար սկավառակավարներ, կիսահաղորդչային սկավառակավարներ, ֆլեշ հիշողության քարտեր, համակցված սկավառակավարներ և համակարգչային ծայրամասային սարքեր.

դաս 42. գիտական և տեխնոլոգիական ծառայություններ առանց էներգիայի աշխատող ֆլեշ հիշողության սարքերի, տեղեկատվական կենտրոնների, գերմասշտաբային համակարգչային համակարգերի և ամպային հաշվարկման վերլուծության և օպտիմալացման համակարգերի համակարգային և օպտիմալացման վերլուծության տեսքով, ինչպես նաև դրանց հետ կապված հետազոտություններ և նախագծում. արդյունաբերական հետազոտություններ առանց էներգիայի աշխատող ֆլեշ հիշողության սարքերի, տեղեկատվական կենտրոնների, գերմասշտաբային համակարգչային համակարգերի և ամպային հաշվարկման վերլուծության և օպտիմալացման համակարգերի համակարգային և օպտիմալացման վերլուծության ոլորտում. համակարգչային ապարատների և ծրագրերի նախագծում և կատարելագործում. չափաբերում (չափումներ). համակարգչային ծրագրավորում. համակարգչային համակարգերի նախագծում. համակարգչային համակարգերի վերլուծություն. տվյալների և տեղեկատվական ծրագրերի կերպավորում (ոչ ֆիզիկական). համակարգչային ծրագրերի բազմացում. տվյալների էլեկտրոնային պահպանում. համակարգչային ծրագրային ապահովման տեղակայում. համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրավորման ոլորտում տեղեկատվության տրամադրում. ծրագրային ապահովման և ներկառուցված ծրագրերի սպասարկում. հեռակա հասանելիության համակարգչային համակարգերի մոնիտորինգ

նշված համակարգերի պատշաճ աշխատանքի և օպտիմալացման ապահովման համար. տվյալների պահեստային հեռապատճենման (օֆսայթ) ծառայություններ. համակարգչային տվյալների վերականգնում. սերվերների տեղավորում (հոսթինգ). նյութերի փորձարկումներ. ծրագրային ապահովման և ներկառուցված ծրագրերի արդիականացում. համակարգչային և էլեկտրոնային տվյալների պահման ծառայություններ. տվյալներով կարծրասկավառակավարների, կիսահաղորդչային սկավառակավարների և համակարգչային պահման սարքերի նախագծում, կատարելագործում, արդիականացում և սպասարկում. տվյալների պահման, տվյալների կառավարման և տեղում կամ ամպային միջավայրում էլեկտրոնային տվյալների պահեստային պատճենման համար համակարգչային ապարատների, ծրագրերի և համակարգերի նախագծում, կատարելագործում, արդիականացում և սպասարկում. տեխնիկական աջակցություն տվյալների պահման, տվյալների կառավարման և տեղում կամ ամպային միջավայրում էլեկտրոնային տվյալների պահեստային պատճենման ոլորտում. համակարգչային ծառայություններ ամպային պահոցում կամ սարքերի վրա պահվող բովանդակությանը կամ մեդիա նյութերին մուտքի ապահովման և դրանց խմբավորման համար, այդ թվում՝ բաշխված համակարգչային սերվերներում կամ շարժական թվային էլեկտրոնային սարքերում պահվող տվյալներին մուտքի ապահովման տեխնոլոգիայով վեբ-կայքերի տրամադրում. համակարգչային ծառայություններ, այն է՝ առցանց ծրագրային ապահովման տրամադրում կիրառական ծրագրային ինտերֆեյսների համար՝ բովանդակությանը կամ մեդիա նյութերին մուտքի ապահովման, դրանց խմբավորման, ստեղծման, կառավարման և գործարկման համար՝ ծրագրեր մշակողների կողմից դրանց օգտագործման նպատակով. ամպային հաշվարկման ծառայություններ, որոնք իրենցից ներկայացնում են ծրագրեր ամպային հաշվարկման ցանցերին մուտքի ապահովման համար, և ծրագրեր ամպային հաշվարկման ծառայություններին մուտքի ապահովման համար. ծրագրային

հարթակների ծառայություններ, որոնք առաջարկում են համակարգչային ծրագրային հարթակներ էլեկտրոնային սարքերի, այն է՝ բջջային հեռախոսների, պլանշետային համակարգիչների և համակարգիչների ամպային պահոցում պահվող բովանդակությանը կամ մեդիա նյութերին մուտքի ապահովման և դրանց խմբավորման համար. համակարգչային ծառայություններ ծայնային տվյալների, տեղեկատվության կամ պատկերների համար էլեկտրոնային պահոցի տրամադրման տեսքով. էլեկտրոնային տվյալների անլար պահման ծառայություններ. տվյալների հիմնապաշարների, պատկերների և այլ էլեկտրոնային տվյալների անլար պահման ծառայություններ:

(740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20161685

(220) 23.12.2016

(111) 26165

(151) 21.07.2017

(181) 23.12.2026

(730) «Գրիտտի» ՍՊԸ, Երևան, Վ. Սարգսյան 10-րդ շ., թիվ 89 տարածք, AM

(442) 16.02.2017

(540)



(526) «OUTLET» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է բաց մոխրագույն և բրոնզագույն գունային համակցությամբ:

(511)

դաս 35. առևտուր:

(210) 20161697
(220) 28.12.2016

(111) 26166
(151) 21.07.2017
(181) 28.12.2026

(730) «Լյումի» ՍՊԸ, Երևան, Սևաբեգի Սաքոյի
փ., 60 բ տուն, AM
(442) 16.02.2017
(540)



(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է բալագույնով:
(511)

դաս 25. հագուստ, մասնավորապես՝ երեկոյան զգեստներ:

(210) 20170002
(220) 09.01.2017

(111) 26167
(151) 21.07.2017
(181) 09.01.2027

(730) Ռոբմանս օֆ Փալ Մալ Լիմիթիդ, CH
(442) 16.02.2017
(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է կանաչ և սև գույնային համակցությամբ:

(511)

դաս 34. սիգարետներ. անմշակ կամ մշակված ծխախոտ. ծխախոտային արտադրանք. ծխախոտի փոխարինիչներ ոչ բուժական նպատակների համար. սիգարներ. սիգարիլներ. կրակայրիչներ. լուցկի. ծխելու պիտույքներ. սիգարետների գլնակներ. ֆիլտրեր սիգարետների համար. սիգարետներ փաթաթելու գրպանի սարքեր. ծխախոտը թղթի գլնակների մեջ լցնելու համար ձեռքի սարքեր. էլեկտրոնային սիգարետներ. հեղուկներ էլեկտրոնային սիգարետների համար. տաքացվող ծխախոտային արտադրանք. էլեկտրոնային սարքեր և դրանց մասեր սիգարետներ կամ ծխախոտ տաքացնելու համար:

(740) Զարուհի Մանուկյան

(210) 20170025
(220) 12.01.2017

(111) 26168
(151) 21.07.2017
(181) 12.01.2027

(730) Բայեր Ակտիենգեզելշաֆտ, DE
(442) 01.03.2017
(540)

СКИНОРЕН

(511)

դաս 5. դեղագործական պատրաստուկներ:
(740) Արարատ Գալոյան

(210) 20170028
(220) 12.01.2017

(111) 26169
(151) 21.07.2017
(181) 12.01.2027

(730) Դուբայ Էվիեյշն Քորփորեյշն (առևտրայինը՝ Ֆլայդուբայ), AE
(442) 01.02.2017
(540)

Open, rewards by flydubai

(511)

դաս 35. մասնակիցներին զեղչային անդամակցության քարտերի օգտագործման միջոցով ապրանքների ու ծառայությունների նկատմամբ զեղչերի տրամադրման ծրագրերի

կառավարում. սպառողների հավատարմության ծրագրերի կառավարում. հաճախորդների հավատարմության և խրախուսական ծրագրերի կառավարում. վարչարարական գործունեություն հաճախորդների հավատարմության ծրագրերի կառավարման ոլորտում. հաճախ ճանապարհորդողների ծրագրերի կառավարում. խրախուսական հատուցման ծրագրերի կառավարում երրորդ անձանց ապրանքների ու ծառայությունների վաճառքի խթանման համար. հավատարմության և խրախուսական ծրագրերի կազմակերպում և կառավարում. հավատարմության ծրագրերի կազմակերպում և կառավարում զեղչերի կամ խրախուսական հատուցումների տրամադրմամբ. հավատարմության համար պարգևատրման ծրագրերի կառավարում. վաճառքի և խթանիչ խրախուսական ծրագրերի կառավարում. վարչարարական գործունեություն վաճառքի խթանման համար խրախուսական ծրագրերի ոլորտում. սպառողների հավատարմության ծրագրերի կազմակերպում և վարչական կառավարում. սպառողների հավատարմության ծրագրերի կազմակերպում առևտրային, խթանման կամ գովազդային նպատակներով. երրորդ անձանց ապրանքների և ծառայությունների խթանում սպառողների հավատարմության համար մրցանակային քարտային համակարգի միջոցով. երրորդ անձանց ապրանքների և ծառայությունների խթանում արտոնյալ հաճախորդների համար ծրագրերի միջոցով. երրորդ անձանց ապրանքների և ծառայությունների խթանում զեղչային քարտերի ծրագրերի միջոցով. երրորդ անձանց ապրանքների և ծառայությունների խթանում գնումներից միավորներ կուտակելու միջոցով կրեդիտ քարտեր օգտագործելիս. վաճառքի օժանդակություն երրորդ անձանց համար արտոնյալ սպառողների քարտերի միջոցով. վաճառքի օժանդակություն սպառողների հավատարմության ծրագրերի միջոցով. տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններ բոլոր վերոհիշյալ ծառայությունների վերաբերյալ՝ ընդգրկված 35-րդ դասում.

դաս 39. օդային փոխադրամիջոցների ծառայություններ, ավիափոխադրումների

ծառայություններ, թռչող սարքերի վարձույթ. ճանապարհորդությունների ծառայություններ. սուրհանդակների ծառայություններ. բեռնման-բեռնաթափման ծառայություններ. բեռների պահման ծառայություններ. բեռնափոխադրման ծառայություններ. ապրանքների օդային առաքում. ճանապարհորդների ուղեկցում. միջնորդություն նավավարձակալման դեպքում և բեռների առաքում. օդանավակայանների վերգետնյա սպասարկման ծառայություններ. ապրանքների փաթեթավորում և պահում. ճանապարհորդությունների համար ամրագրմամբ զբաղվող գործակալությունների ծառայություններ. տուրիստական գործակալությունների ծառայություններ. չվերթների ամրագրում. չվերթների կազմակերպում. հանգստի կազմակերպում. տուրիստական ուղեգրերի փաթեթների տրամադրում. տուրիստական տեղեկատվության տրամադրում. աջակցություն չվերթների գրանցման և ճանապարհորդությունների կազմակերպման հարցերում. ավիափոխադրումների ծառայություններ հաճախակի թռչող ուղևորների համար՝ բոնուսային ծրագրերի կիրառմամբ. հաճախակի թռչող ուղևորների առաջնակարգ նստեցում, գրանցում, տեղավորում և ամրագրում. տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններ բոլոր վերոհիշյալ ծառայությունների վերաբերյալ՝ ընդգրկված 39-րդ դասում:

(740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20170039

(220) 17.01.2017

(111) 26170

(151) 21.07.2017

(181) 17.01.2027

(730) Անդրեյ Վանյան, Երևան, Մարգարյան 2-րդ նրբ., շ. 12ա, բն. 17, AM

(442) 01.02.2017

(540)



(526) «BAZAR BLOT» գրառումը և «CLUB» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է շագանակագույն, մուգ շագանակագույն, մարմնագույն և կարմիր գունային համակցությամբ:

(511)

դաս 28. խաղեր, խաղահաշվի նիշեր մոլախաղերի համար.

դաս 41. զվարճություններ, ժամանցի ծառայություններ, մուլեխաղերի ոլորտում ծառայություններ, ակումբների ծառայություններ (զվարճանքի), մրցույթների կազմակերպում (զվարճալի), մրցումների (մրցաշարերի) կազմակերպում, խաղադահլիճների ծառայությունների տրամադրում:

(210) 20170064

(111) 26171

(220) 19.01.2017

(151) 21.07.2017

(181) 19.01.2027

(730) Ստյոպա Ծառուկյան, Կոտայքի մարզ, գ. Առինջ, Բ թաղ., 5-րդ փ., տուն 8, AM

(442) 16.02.2017

(540)



(526) «ՏՈՒՆ - ՌԵՍՏՈՐԱՆ» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է դեղին, մոխրագույն, կանաչ, երկնագույն և սև գունային համակցությամբ:

(511)

դաս 43. ռեստորանների ծառայություններ, սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ:

(210) 20170068

(111) 26172

(220) 19.01.2017

(151) 21.07.2017

(181) 19.01.2027

(730) Ստյոպա Ծառուկյան, Կոտայքի մարզ, գ. Առինջ, Բ թաղ., 5-րդ փ., տուն 8, AM

(442) 16.02.2017

(540)



(526) «ԳԻՆԵՏՈՒՆ» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է մուգ կարմիր և սև գունային համակցությամբ:

(511)

դաս 43. ռեստորանների ծառայություններ, սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ:

(210) 20170072

(111) 26173

(220) 20.01.2017

(151) 21.07.2017

(181) 20.01.2027

(730) «Ինտեր գրուպ» ՍՊԸ, Երևան, Ուլենցի 3-րդ փակուղի, շ. 2, բն. 36, AM

(442) 01.02.2017

(540)

MARS AQUA

(526) «AQUA» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511)

դաս 32. հանքային և գազավորված ջրեր:

(740) Զարուհի Մանուկյան

(210) 20170073

(111) 26174

(220) 20.01.2017

(151) 21.07.2017

(181) 20.01.2027

(730) «Ինտեր գրուպ» ՍՊԸ, Երևան, Ուլենցի 3-րդ փակուղի, շ. 2, բն. 36, AM

(442) 01.02.2017

(540)

Sonata

(511)

դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

(740) Զարուհի Մանուկյան

(210) 20170090

(111) 26175

(220) 25.01.2017

(151) 21.07.2017

(181) 25.01.2027

(730) Զակրիտոյե Ակցիոներնոյե Օբշչեստվո «ՏեխնոՆԻԿՈՒ», RU

(442) 16.02.2017

(540)

Знание. Опыт. Мастерство.

(511)

դաս 1. քիմիական նյութեր, որոնք նախատեսված են օգտագործելու արդյունաբերական և գիտական նպատակներով, լուսանկարչության, գյուղատնտեսության, այգեգործության և անտառաբուծության մեջ. չմշակված սինթետիկ խեժեր, չմշակված պլաստմասսաներ. պարարտանյութեր. կրակմարող բաղադրություններ. պատրաստուկներ մետաղների զոդման և միման համար. քիմիական նյութեր սննդամթերքի պահածոյացման համար. դաբադիչ նյութեր. սոսնձող նյութեր արդյունաբերական նպատակներով օգտագործելու համար.

դաս 2. ներկեր, արծնուկներ, լաքեր. մետաղը ժանգոտումից և փայտանյութը քայքայումից պաշտպանող նյութեր. ներկանյութեր. խաճատող, սևեռակայող նյութեր, չմշակված բնական խեժեր. թերթավոր և փոշենման մետաղներ գեղանկարչության, գեղազարդման նպատակների և գեղարվեստական տպագրության համար.

դաս 6. սովորական մետաղներ և դրանց համահալվածքներ. հանքանյութեր. շինարարական մետաղյա նյութեր. շարժական

մետաղյա կառուցվածքներ և շինություններ. ոչ էլեկտրական սովորական մետաղյա ճոպաններ և լարեր. մետաղյա և երկաթակապ փոքր իրեր. մետաղյա բեռնարկղեր պահպանման և փոխադրման համար. անկիզելի պահարաններ.

դաս 16. թուղթ և ստվարաթուղթ. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական և գրասենյակային պիտույքներ, բացառությամբ կահույքի. կպչուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. նյութեր նկարիչների և նկարչության համար. վրձիններ. ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ. պլաստմասսայե թերթեր, ժապավեններ և տոպրակներ փաթեթավորման և կապոցավորման համար. տառաշարեր. տպագրական կլիշեներ.

դաս 17. չմշակված կամ մասնակի մշակված կաուչուկ, ռետին, գուտապերչ, ասբեստ, փայլար և այդ նյութերի փոխարինիչներ. մասնակի մշակված պլաստմասսաներ և ռետիններ. խծուծման, խցման և մեկուսացման նյութեր. ոչ մետաղական ճկուն խողովակներ.

դաս 19. ոչ մետաղական շինանյութեր. ոչ մետաղական կոշտ խողովակներ շինարարական նպատակների համար. ասֆալտ, խեժեր և բիտում. ոչ մետաղական շարժական կառուցվածքներ և շինություններ. ոչ մետաղական հուշարձաններ.

դաս 22. ճոպաններ, պարաններ, առասաններ. ցանցեր. վրաններ, բրեզենտ. մանածագործական կամ սինթետիկ նյութերից վրանածածկեր. առագաստներ. պարկեր, առանց փափեթավորման փոխադրման և պահպանման համար. խծուծման նյութեր, բացառությամբ թղթից, ստվարաթղթից, ռետինից և պլաստմասսայից պատրաստվածների. մանածագործական թելքահումքից նյութեր և դրանց փոխարինիչներ.

դաս 27. գորգեր, հատակի ծածկոցներ, խսիրներ, լինօլեում և այլ հատակածածկույթներ. պատի պաստառներ (ոչ մանածագործական).

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ.

դաս 37. շինարարություն. նորոգում. սարքավորումների տեղակայում.

դաս 39. տրանսպորտային փոխադրումներ. ապրանքների փաթեթավորում և պահպանում. ճանապարհորդությունների կազմակերպում.

դաս 42. գիտական և տեխնոլոգիական ծառայություններ և դրանց հետ կապված հետազոտություններ և մշակումներ. արդյունաբերական վերլուծումների և հետազոտությունների ծառայություններ. համակարգչային ապարատների և ծրագրային ապահովման մշակում և զարգացում.

դաս 45. իրավաբանական ծառայություններ, այդ թվում՝ իրավաբանական հետազոտություններ. խորհրդատվություն մտավոր սեփականության հարցերով. դատարանում իրավունքների ներկայացում. միջնորդություն վեճերը լուծելու հարցում. վեճերի այլընտրանքային (արտադատարանային) լուծման ծառայություններ. անվտանգության ծառայություններ գույքի և անհատների պաշտպանության համար, այդ թվում՝ խորհրդատվություն անվտանգության հարցերով. ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկատվության հավաքում. ձեռնարկությունների անվտանգության վիճակի ստուգում:

(740) Անգելինա Նահապետյան

(210) 20170091

(111) 26176

(220) 25.01.2017

(151) 21.07.2017

(181) 25.01.2027

(730) Զակրիտոյե Ալգիոներնոյե Օբշչեստվո «ՏեխնոՆԻԿՈՒԼ», RU

(442) 16.02.2017

(540)

Knowledge. Experience. Craftsmanship.

(511)

դաս 1. քիմիական նյութեր, որոնք նախատեսված են օգտագործելու արդյունաբերական և գիտական նպատակներով, լուսանկարչության, գյուղատնտեսության, այգեգործության և անտառաբուծության մեջ. չմշակված սինթետիկ խեժեր, չմշակված պլաստմասսաներ. պարարտանյութեր. կրակմարող բաղադրություններ. պատրաստուկներ

մետաղների զոդման և միմյան համար. քիմիական նյութեր սննդամթերքի պահածոյացման համար. դաբաղիչ նյութեր. սոսնձող նյութեր արդյունաբերական նպատակներով օգտագործելու համար.

դաս 2. ներկեր, արձնուկներ, լաքեր. մետաղը ժանգոտումից և փայտանյութը քայքայումից պաշտպանող նյութեր. ներկանյութեր. խաժատող, սևեռակայող նյութեր, չմշակված բնական խեժեր. թերթավոր և փոշենման մետաղներ գեղանկարչության, գեղազարդման նպատակների և գեղարվեստական տպագրության համար.

դաս 6. սովորական մետաղներ և դրանց համահավաճքներ. հանքանյութեր. շինարարական մետաղյա նյութեր. շարժական մետաղյա կառուցվածքներ և շինություններ. ոչ էլեկտրական սովորական մետաղյա ճոպաններ և լարեր. մետաղյա և երկաթակապ փոքր իրեր. մետաղյա բեռնարկղեր պահպանման և փոխադրման համար. անկիզելի պահարաններ.

դաս 16. թուղթ և սովորաթուղթ. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական և գրասենյակային պիտույքներ, բացառությամբ կահույքի. կաշուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. նյութեր նկարիչների և նկարչության համար. վրձիններ. ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ. պլաստմասսայե թերթեր, ժապավեններ և տոպրակներ փաթեթավորման և կապոցավորման համար. տառաշարեր. տպագրական կլիշեներ.

դաս 17. չմշակված կամ մասնակի մշակված կաուչուկ, ռետին, գուտապերչ, ասբեստ, փայլար և այդ նյութերի փոխարինիչներ. մասնակի մշակված պլաստմասսաներ և ռետիններ. խճուճման, խցման և մեկուսացման նյութեր. ոչ մետաղական ճկուն խողովակներ.

դաս 19. ոչ մետաղական շինանյութեր. ոչ մետաղական կոշտ խողովակներ շինարարական նպատակների համար. ասֆալտ, խեժեր և բիտում. ոչ մետաղական շարժական կառուցվածքներ և շինություններ. ոչ մետաղական հուշարձաններ.

դաս 22. ճոպաններ, պարաններ, առասաններ. ցանցեր. վրաններ, բրեզենտ.

մանածագործական կամ սինթետիկ նյութերից վրանածածկեր. առագաստներ. պարկեր, առանց փափեթավորման փոխադրման և պահպանման համար. խծուծման նյութեր, բացառությամբ թղթից, ստվարաթղթից, ռետինից և պլաստմասսայից պատրաստվածների. մանածագործական թելքահումքից նյութեր և դրանց փոխարինիչներ.

դաս 27. գորգեր, հատակի ծածկոցներ, խսիրներ, լինօլեում և այլ հատակածածկույթներ. պատի պաստառներ (ոչ մանածագործական).

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ.

դաս 37. շինարարություն. նորոգում. սարքավորումների տեղակայում.

դաս 39. տրանսպորտային փոխադրումներ. ապրանքների փաթեթավորում և պահպանում. ճանապարհորդությունների կազմակերպում.

դաս 42. գիտական և տեխնոլոգիական ծառայություններ և դրանց հետ կապված հետազոտություններ և մշակումներ. արդյունաբերական վերլուծումների և հետազոտությունների ծառայություններ. համակարգչային ապարատների և ծրագրային ապահովման մշակում և զարգացում.

դաս 45. իրավաբանական ծառայություններ, այդ թվում՝ իրավաբանական հետազոտություններ. խորհրդատվություն մտավոր սեփականության հարցերով. դատարանում իրավունքների ներկայացում. միջնորդություն վեճերը լուծելու հարցում. վեճերի այլընտրանքային (արտադատարանային) լուծման ծառայություններ. անվտանգության ծառայություններ գույքի և անհատների պաշտպանության համար, այդ թվում՝ խորհրդատվություն անվտանգության հարցերով. ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկատվության հավաքում. ձեռնարկությունների անվտանգության վիճակի ստուգում:

(740) Անգելինա Նահապետյան

(210) 20170101

(220) 27.01.2017

(111) 26177

(151) 21.07.2017

(181) 27.01.2027

(730) Անհատ ձեռնարկատեր Էդգար Խալաթյան, RU

(442) 16.03.2017

(540)



(526) «hand made» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է բաց ոսկեգույն և սև գունային համակցությամբ:

(511)

դաս 18. կաշի և կաշվի նմանակումներ. կենդանիների մորթիներ. սնդուկներ և ճամփորդական ճամպուրկներ. անձրևի և արևի հովանոցներ. ձեռնափայտեր. մտրակներ, լծասարքեր և թամբագործական իրեր. պարանոցակապեր, սանձափուկեր և հագուստ կենդանիների համար. կաշվե պայուսակներ և տուփեր. պայուսակներ. ճամպուրկներ. կանացի պայուսակների հիմնակմախքներ. արհեստական կաշի. կաշվե փականներ. քսակներ. դրամապանակներ. բոլորագլխարկների կաշվե տուփեր. անձրևի կամ արևի հովանոցների հիմնակմախքներ. մորթեղեն. օղակներ հովանոցների համար. բռնակներ հովանոցների համար. կահույքի կաշվե պաստառներ. կահույքի կաշվե հարդարանք. ձեռքի ուսապարկեր. պորտֆելներ. որսորդական պարագաներ.

դաս 25. հագուստ, կոշիկներ, գլխարկներ. շարֆեր. կոշիկներ. սանդալներ. մինչև կոճերը հասնող կոշիկներ. ներքնազգեստներ. բլուզներ. կիսակոշիկներ. սպորտային կիսակոշիկներ. ներբաններ. բրիջիններ. տաբատներ.

ֆուտբոլային բուսեր. կրկնակոշիկներ. լողազվխարկներ. ներդիրներ շապիկների համար. քողեր. փողկապներ. կրունկներ. կոշիկների ճութեր. տրիկոտաժեղեն. գրպաններ հագուստների համար. կոմբինեզոններ. բաճկոններ. կոստյումներ. լողազգեստներ. սպորտային մայկաներ. թիկնոցներ. կոշիկների կրկնատակեր. սպորտային հագուստ. վերարկուներ. գոտիներ. երկարաճիտ կոշիկներ. գուլպաներ. սպիտակեղեն. ձեռնոցներ. պիժամաներ. գլխակապեր. պատրաստի աստառներ. կարճաթև մայկաներ. խալաթներ. գոգնոցներ. շալեր. մուշտակներ. շրջազգեստներ.

